Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 04

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<11>> մարտի 2022թ. գ. Երևան

2022 թվականի մարտի 11-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, պատասխանատու քարտուղար
Ս. Բաղինյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական, հանձնաժողովի անդամ
Խ. Սողոմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային օդային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը.
Նիստն արձանագրում էր հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:
2. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու համար ներկայացված 8 հայտերի քննարկում:
3. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 դիմումի քննարկում:
4. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 դիմումի քննարկում:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

Քննարկվեց՝

«ՔԱՐ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի փետրվարի 7-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և փետրվարի 16-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի փետրվարի 7-ին լիազոր մարմին է ներկայացրել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին հայտ և հայտին կից փաստաթղթեր:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, թիվ ԱՍ/25.1/5283-2022 գրությամբ Կազմակերպությանը ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին: Կազմակերպությունը 16.02.2022թ. 7512 մտից գրությամբ ներկայկացրել է լրացուցիչ նյութեր և շտկել է հայտում և կից փաստաթղթերում առկա թերությունները: Ներկայացված սարքավորումների և այլ պայմանների համապատասխանության ուսումնասիրություն իրականացվել է ՔՏԱ տեսչական մարմնի աշխատակիցների կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՔԱՐ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

2.1 Քննարկվեց՝

<<ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի փետրվարի 28-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին /Գործունեության վայր՝ ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Ն. Տիգրանյան փ., 1-ին փակուղի 1/:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի փետրվարի 28-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին: Ներկայացված սարքավորումների և այլ պայմանների համապատասխանության ուսումնասիրություն իրականացվել է ՔՏԱ տեսչական մարմնի աշխատակիցների կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՊՐԵՄԻՈՒՄ ԳԱԶ>> ՍՊԸ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2.2 Քննարկվեց՝

<<ԳԱԶՄԱՍՏԵՐ>> ՍՊԸ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի փետրվարի 14-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և մարտի 1-ին ի լրումն ներկայկացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի փետրվարի 14-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, թիվ ԱՍ/25.1/4378-2022 գրությամբ հայտատուին ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝

ա. առկա չէ Կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1565-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ լիցենզիա և լիցենզիայի ներդիր ստանալու մասին հայտը՝ համաձայն N 1 ձևի:

բ. առկա չէ տարածքի /շինության/ հատակագիծը ըստ հայցվող գործունեության տեսակների՝ համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 28-րդ և 29-րդ կետերի պահանջի: Հատակագծում անհրաժեշտ է առանձին ներկայացնել գազաբալոնային սարքավորումներն ավտոտրանսպորտային միջոցներում տեղակայելու տեղամասի, գազաբալոնները պարբերաբար վկայագրելու տեղամասի և ճնշարկային տեղամասի համար նախատեսված շինությունների պարամետրերը /երկարություն, լայնություն, բարձրություն/:

գ. առկա չէ գազաբալոնային սարքավորումներ տեղադրելու և (կամ) պարբերաբար վկայագրելու աշխատանքների կատարման համար ներգրավվող բանվորական և ինժեներատեխնիկական անձնակազմի մասնագիտական որակավորման փաստաթղթերի պատճենները, որոնք տրամադրված են Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված և լիազոր մարմնի կողմից հաշվառված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև այն ուսումնական հաստատությունների կամ կազմակերպությունների կողմից, որոնց ծրագրերը և ուսումնական պլանները հաստատված են կրթության ոլորտի պետական լիազոր մարմնի կողմից:

դ.առկա չէ որպես արտադրական վտանգավոր օբյեկտ՝ հայտատուի կողմից ներկայացված արտադրական բազայի վերաբերյալ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված և լիազոր մարմնի կողմից հաշվառված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքով սահմանված կարգով տրամադրված փորձագիտական եզրակացությունը:

ե. առկա չէ արտադրական բազայի հիմնական տեխնոլոգիական սարքավորումներով հագեցվածության մասին տեղեկանք՝ համաձայն N 6 ձևի և սարքավորումների տեխնիկական պարամետրերը պարունակող տեխնիկական անձնագրերը:

Միաժամանակ հայտատուին «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն առաջարկվել է նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել պահանջվող փաստաթղթերը և նախազգուշացվել, որ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպությունը 01.03.2022թ. 10111-2022 մտից գրությամբ ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ վերացնելով թիվ ԱՍ/25.1/4378-2022 գրությամբ նշված թերությունները: Ներկայացված սարքավորումների և այլ պայմանների համապատասխանության ուսումնասիրություն իրականացվել է ՔՏԱ տեսչական մարմնի աշխատակիցների կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ԳԱԶՄԱՍՏԵՐ>> ՍՊԸ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2.3 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Դավիթ Մարդանյանի /այսուհետ՝ Հայտատու/ 2022 թվականի փետրվարի 14-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և մարտի 1-ին ի լրումն ներկայկացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի փետրվարի 14-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, թիվ ԱՍ/25.1/2545-2022 գրությամբ Հայտատուին ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝

ա.բացակայում է ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998 -Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 8-րդ կետի «բ» ենթակետով սահմանված՝ գործունեության համար նախատեսված արտադրական բազայի սեփականության կամ օգտագործման իրավունքի ձեռքբերումը հաստատող պայմանագրի պատճենը և հատակագիծը: Անհատ ձեռնարկատեր Դավիթ Մարդանյանին անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման N 22122021-11-0047 վկայականով տրամադրված՝ Տավուշի մարզի Իջևան քաղաքի Երևանյան փողոցի 33 հասցեում գտնվող շինությունների բարձրությունը չի համապատասխանում նշված կարգի 23-րդ կետով սահմանված պահանջին, ըստ որի փորձարկելու տեղամասի մասնաշենքի շինության բարձրությունը պետք է լինի առնվազն 5 մետր:

բ. անհրաժեշտ է ներկայացնել գործունեության համար նախատեսված արտադրական բազայի հատակագիծը, որտեղ ըստ հայցվող գործունեության տեսակների հստակ արձանագրված են սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրման, գազաբալոնների պարբերական վկայագրման և ճնշարկային տեղամասի համար նախատեսված տարածքների /շինությունների/ տարածքների պարամետրերը /երկարություն, լայնություն, բարձրություն, մուտք-ելք/,

գ .հայտին կից փաստաթղթերում բացակայում են գործունեության համար նախատեսված սարքավորումների, մասնավորապես՝ գազաբալոնների հիդրավլիկ փորձարկման կայանքի, օդաճնշարկային կայանքի և վակուումային տեղակայանքի տեխնիկական բնութագրերը պարունակող տեխնիկական անձնագրերը:

Միաժամանակ հայտատուին «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն առաջարկվել է նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել պահանջվող փաստաթղթերը և նախազգուշացվել, որ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Հայտատուն 08.02.2022թ. 5897-2022 մտից գրությամբ ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ վերացնելով թիվ ԱՍ/25.1/2545-2022 գրությամբ նշված թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԴԱՎԻԹ ՄԱՐԴԱՆՅԱՆ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2.4 Քննարկվեց՝

<<Ա-Ռ-Գ>> ՍՊԸ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի փետրվարի 14-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և փետրվարի 25-ին ի լրումն ներկայկացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի փետրվարի 14-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, թիվ ԱՍ/25.1/4048-2022 գրությամբ հայտատուին ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝

ա.շինության հատակագծում բացակայում է ճնշարկային տեղամասի նշագրումը:

բ. «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊ ընկերության կողմից արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության ՆՓ/215-21-1 եզրակացությունը վերաբերում է Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Կամոյի 6 հասցեում տեղակայված օբյեկտին, մինչդեռ Ձեր կողմից ներկայացված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 10022022-058-0007 վկայականում Ձեր կազմակերպությանը տրամադրված շինության հասցեն նշված է Գեղարքունիքի մարզ, Մարտունի քաղաք, Կամոյի փողոց 26/8:

գ. բացակայում են Կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման համար օգտագործվող չափման միջոցների՝ «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքով սահմանված կարգով չափագիտության լիազոր մարմնի կողմից տրամադրված ստուգաչափման վկայականները,

դ.բացակայում է գազաբալոնների հիդրավլիկ փորձարկման կայանքի տեխնիկական պարամետրերը պարունակող տեխնիկական անձնագիրը,

ե. հայտի կից փաստաթղթերում ներկայացված են նյութեր, որոնք վերաբերում են «Մարտունի Գազ» ՍՊ ընկերությանը պատկանող փորձարկման լաբորատորիային, ոչ թե «Ա-Ռ-Գ» ՍՊ ընկերությանը,

ա. առկա չէ Կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1565-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ լիցենզիա և լիցենզիայի ներդիր ստանալու մասին հայտը՝ համաձայն N 1 ձևի:

բ. առկա չէ տարածքի /շինության/ հատակագիծը ըստ հայցվող գործունեության տեսակների՝ համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 28-րդ և 29-րդ կետերի պահանջի: Հատակագծում անհրաժեշտ է առանձին ներկայացնել գազաբալոնային սարքավորումներն ավտոտրանսպորտային միջոցներում տեղակայելու տեղամասի, գազաբալոնները պարբերաբար վկայագրելու տեղամասի և ճնշարկային տեղամասի համար նախատեսված շինությունների պարամետրերը /երկարություն, լայնություն, բարձրություն/:

գ. առկա չէ գազաբալոնային սարքավորումներ տեղադրելու և (կամ) պարբերաբար վկայագրելու աշխատանքների կատարման համար ներգրավվող բանվորական և ինժեներատեխնիկական անձնակազմի մասնագիտական որակավորման փաստաթղթերի պատճենները, որոնք տրամադրված են Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված և լիազոր մարմնի կողմից հաշվառված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև այն ուսումնական հաստատությունների կամ կազմակերպությունների կողմից, որոնց ծրագրերը և ուսումնական պլանները հաստատված են կրթության ոլորտի պետական լիազոր մարմնի կողմից:

դ.առկա չէ որպես արտադրական վտանգավոր օբյեկտ՝ հայտատուի կողմից ներկայացված արտադրական բազայի վերաբերյալ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված և լիազոր մարմնի կողմից հաշվառված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքով սահմանված կարգով տրամադրված փորձագիտական եզրակացությունը:

ե. առկա չէ արտադրական բազայի հիմնական տեխնոլոգիական սարքավորումներով հագեցվածության մասին տեղեկանք՝ համաձայն N 6 ձևի և սարքավորումների տեխնիկական պարամետրերը պարունակող տեխնիկական անձնագրերը:

Միաժամանակ հայտատուին «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն առաջարկվել է նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել պահանջվող փաստաթղթերը և նախազգուշացվել, որ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպությունը 25.02.2022թ. 9521-2022 մտից գրությամբ ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ վերացնելով թիվ ԱՍ/25.1/4048-2022 գրությամբ նշված թերությունները: Ներկայացված սարքավորումների և այլ պայմանների համապատասխանության ուսումնասիրություն իրականացվել է ՔՏԱ տեսչական մարմնի աշխատակիցների կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<Ա-Ռ-Գ>> ՍՊԸ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2.5 Քննարկվեց՝

<<ԴԻՋԻՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2022 թվականի փետրվարի 4-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի փետրվարի 4-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, թիվ ԱՍ/25.1/2913-2022 գրությամբ հայտատուին ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝

ա.բացակայում է Կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998 -Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 8-րդ կետի «բ» ենթակետով սահմանված՝ «Դիջիսերվիս» ՍՊ ընկերության գործունեության համար նախատեսված արտադրական բազայի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի պատճենը և տարածքի հատակագիծը: Հատակագծում անհրաժեշտ է առանձին ներկայացնել գազաբալոնային սարքավորումներն ավտոտրանսպորտային միջոցներում տեղակայելու տեղամասի, գազաբալոնները պարբերաբար վկայագրելու և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերը փորձարկելու տեղամասի և ճնշարկային տեղամասի համար նախատեսված շինությունների պարամետրերը /երկարություն, լայնություն, բարձրություն, մուտք-ելք/,

բ. բացակայում են Կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998 -Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 8-րդ կետի «գ» ենթակետով սահմանված՝ գազաբալոնային սարքավորումներ տեղադրելու և (կամ) պարբերաբար վկայագրելու աշխատանքների կատարման համար ներգրավվող բանվորական և ինժեներատեխնիկական անձնակազմի մասնագիտական որակավորման փաստաթղթերի պատճենները,

գ. բացակայում են Կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998 -Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 8-րդ կետի «դ» ենթակետով սահմանված՝

սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման համար օգտագործվող չափման միջոցների՝ «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքով սահմանված կարգով չափագիտության լիազոր մարմնի կողմից տրամադրված ստուգաչափման վկայականները,

դ. բացակայում է Կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998 -Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 8-րդ կետի «ե» ենթակետով սահմանված՝ որպես արտադրական վտանգավոր օբյեկտ՝ հայտատուի կողմից ներկայացված արտադրական բազայի վերաբերյալ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված և լիազոր մարմնի կողմից հաշվառված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքով սահմանված կարգով տրամադրված փորձագիտական եզրակացությունը,

ե.բացակայում են գործունեության համար սահմանված հիմնական տեխնոլոգիական սարքավորումների՝ տեխնիկական պարամետրերը պարունակող տեխնիկական անձնագրերը:

Միաժամանակ հայտատուին «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն առաջարկվել է նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել պահանջվող փաստաթղթերը և նախազգուշացվել, որ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպությունը չի ներկայացրել լրացուցիչ նյութեր, չի վերացրել ԱՍ/25.1/2913-2022 գրությամբ նշված թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ԴԻԶԻՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ	0 կողմ, 6 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2.6 Քննարկվեց՝

<<ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆԵՐ>> ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2022 թվականի փետրվարի 4-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և փետրվարի 16-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի փետրվարի 4-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, թիվ ԱՍ/25.1/3337-2022 գրությամբ հայտատուին ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝

ա. բացակայում է Կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 8-րդ կետի «բ» ենթակետով սահմանված՝ «Հայր և որդի Հարությունյաններ» ՍՊ ընկերության գործունեության համար նախատեսված Ն. Սիսակյան փ., 4/2 հասցեում գտնվող շինության հատակագիծը,

բ. անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 27122021-01-0478 վկայականում բացակայում է Ն. Սիսակյան փ., 4/1 հասցեում գտնվող շինության բնութագիրը, իսկ ներկայացված հատակագծում շինության լայնությունը /5,60մ./ չի համապատասխանում գազաբալոնային սարքավորումներն ավտոտրանսպորտային միջոցներում տեղակայելու տեղամասի կամ գազաբալոնները պարբերաբար վկայագրելու և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերը փորձարկելու տեղամասի համար օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափին /առնվազն՝ 6,0 մ./,

գ. բացակայում է ճնշարկային տեղամասի համար նախատեսված շինության վերաբերյալ տեղեկատվությունը,

դ.որպես արտադրական վտանգավոր օբյեկտ՝ «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՍՊ ընկերության կողմից տրամադրված N 552 եզրակացությունը վերաբերում է միայն ք. Երևան, Ն. Սիսակյան փ., 4/1 հասցեում տեղակայված շինությանը,

ե.բացակայում են Կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998 -Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 8-րդ կետի «դ» ենթակետով սահմանված՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման համար օգտագործվող բոլոր չափման միջոցների՝ «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքով սահմանված կարգով չափագիտության լիազոր մարմնի կողմից տրամադրված ստուգաչափման վկայականները /ներկայացված է միայն մեկ ճնշաչափի ստուգաչափման վերաբերյալ տեղեկատվություն/:

Միաժամանակ հայտատուին «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն առաջարկվել է նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել պահանջվող փաստաթղթերը և նախազգուշացվել, որ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի

վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպությունը 16.02.2022թ. 7504-2022 մտից գրությամբ ներկայացրել է լրացուցիչ նյութեր, սակայն ամբողջովին չի վերացրել թիվ ԱՍ/25.1/3337-2022 գրությամբ նշված թերությունները, մասնավորապես՝ չի ներկայացրել գ. կետով նշված՝ ճնշարկային տեղամասի համար նախատեսված շինության վերաբերյալ տեղեկատվությունը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆԵՐ>> ՍՊԸ	0 կողմ, 6 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումի քննարկում:

Քննարկվեց՝

<<ՄԱՐԿԻԶԱ ՇԻԿ>> ՍՊ ընկերության 2022 թվականի փետրվարի 25-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05187 լիցենզիան լիցենզիայի թվով 35 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

ներկայացրեց <<ՄԱՐԿԻԶԱ ՇԻԿ>> ՍՊ ընկերության 2022 թվականի փետրվարի 25-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05187 լիցենզիան լիցենզիայի թվով 35 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ լիցենզիայի և ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՄԱՐԿԻԶԱ ՇԻԿ>> ՍՊԸ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

4. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումի քննարկում:

Քննարկվեց՝

<<ԿՐԵԴՈ ԳՐՈՒՊ>> ՍՊ ընկերության 2022 թվականի մարտի 2-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05183 լիցենզիայի N 00003, N 00007, N 00008, N 00009, N 00010, N 00011, N 00012, N 00013, N 00014, N 00015, N 00018, N 00020, N 00021, N 00022, N 00023, N 00025, N 00027, N 00028, N 00029, N 00030 և N 00032 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

ներկայացրեց <<ԿՐԵԴՈ ԳՐՈՒՊ>> ՍՊ ընկերության 2022 թվականի մարտի 2-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05183 լիցենզիայի N 00003, N 00007, N 00008, N 00009, N 00010, N 00011, N 00012, N 00013, N 00014, N 00015, N 00018, N 00020, N 00021, N 00022, N 00023, N 00025, N 00027, N 00028, N 00029, N 00030 և N 00032 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ ներդիրների բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ԿՐԵԴՈ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի պատասխանատու
քարտուղար Ա. Ստեփանյան